



ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 6



ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:



ԴԱՍ 6

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՉԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ
ՉԱՐՈՒՑԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,

բառարան և


ինքնաստուգիչ հարցեր:

Բոլոր բաղադրիչների յուրացման համար

Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն
այս ձեռնարկում:


ՄՈՏԻՎԱԶՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 5 րոպե:



Ուշադրությամբ
կարդացեք դասի
տեսական մասը՝
օգտվելով բառարանից,
և այն յուրացնելուց հետո
միայն պատասխանեք
ինքնաստուգիչ
հարցերին:
Այս աշխատանքների
համար անհրաժեշտ է
մոտ 205 րոպե:




գործող քրեադատավարա-
կան կարգավորումների համաձայն՝ քրեական դատա-
վարությունը սկսվում է քրեական գործի հարուցմամբ,
որը քրեական դատավարության պարտադիր փուլ է:
Քրեական գործի հարուցման օրենքով նախատեսված
առիթները նույնն են բոլոր հանցագործությունների
համար: Ըստ ԸԸ գործող քրեական օրենսգրքի 176-րդ
հոդվածի՝ քրեական գործ հարուցելու առիթներն են՝

- 1 հանցագործությունների մասին ֆիզիկական
և իրավաբանական անձանց հաղորդում-
ները՝ ուղղված հետաքննության մարմնին,
քննիչին, դատախազին.
- 2 հանցագործությունների մասին լրատվու-
թյան միջոցների հաղորդումները.
- 3 հետաքննության մարմնի, քննիչի, դատա-
խազի, դատարանի, դատավորի կողմից
հանցագործության մասին տվյալների, հան-
ցագործության նյութական հետքերի և հետ-
ևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազո-
րություններն իրականացնելիս:

Հանցագործության մասին հաղորդումները

կարող են ներկայացվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր: Վարույթն իրականացնող մարմնի կողմից բանավոր հաղորդումները մտցվում են արձանագրության մեջ, որը ստորագրում է հաղորդում տվող անձը: Հաղորդում տվող անձը նաև նախագգուշացվում է սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին: Այստեղ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքի վրա, որ Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կոնվենցիայով, պետությունները պետք է խրախուսեն այն անձանց, ովքեր հաղորդում են տալիս կոռուպցիոն բնույթի հանցագործության մասին: Մասնավորապես, Կոնվենցիայի 39-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, կարող են անհրաժեշտ լինել ազգային քննչական մարմինների և դատախազության և մասնավոր հատվածի, մասնավորապես՝ ֆինանսական հիմնարկների միջև այնպիսի հարցերով համագործակցությունը խրախուսելու համար, որոնք կապված են իրավախախտումների կատարման հետ, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան: Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այն մասին հարցը, որ խրախուսի իր տարածքում բնակվող իր քաղաքացիներին և այլ անձանց՝ ազգային քննչական մարմիններին և դատախազական մարմիններին հայտնել իրավախախտումներից որևէ մեկի կատարման մասին, որն այդպիսին է ճանաչվում սույն Կոնվենցիային համապատասխան:



Կոռուպցիոն հանցագործությունների մասին տեղեկությունների ստացման ինչ ճանաչված աղբյուրներ կարող եք նշել:

Նախորդ դասից վերհիշենք այն փաստը, որ խրախուսական նորմը ՀՀ նոր քրեական օրենսգրքում այլևս նախատեսված չէ:

Իհարկե, այս առնչությամբ պետք է փաստել, որ ՀՀ օրենսդրության մեջ տեղ գտած խնդրահարույց ձևակերպումներից մեկը վերաբերում է կաշառք տալու համար պատասխանատվություն սահմանող հոդվածում տեղ գտած խրախուսական նորմին, որի համաձայն՝ «կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն»: Նման ձևակերպումը գրեթե անհնարին է դարձնում հիշյալ խրախուսական նորմի կիրառումը, բացի այդ միջազգային կառույցների կողմից այն դիտարկվում է որպես ոչ հաջողված լուծում, քանի որ սահմանում է հիմք, որը ենթադրում է կաշառք տվող անձի պարտադիր ազատման դեպք՝ անկախ գործի հանգամանքներից:

Անդրադառնալով քննարկվող հանցագործությունների վերաբերյալ հնարավոր հաղորդումների շրջանակին՝ պետք է փաստել, որ նշված հանցագործությունների մասին տեղեկությունների ստացման աղբյուր կարող են ծառայել հայտարարագրման գործընթացում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կատարված բացահայտումները: Այսպես «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե

հայտարարագրերի վերլուծության արդյունքում մնում են կասկածներ, որ հայտարարատու պաշտոնատար անձի կամ իր ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի էական փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը կամ ծախսը) ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ, ապա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրավասու է՝

1 հայտարարատուից հայցելու պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր՝ դրանք ներկայացնելու համար տրամադրելով նվազագույնը 10, իսկ առավելագույնը՝ 30 օր ժամկետ.

2 պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր, եթե վերը նշված կասկածները կարող են փարատվել իրավիճակային հայտարարագրով ներկայացնելու ենթակա տվյալների վերլուծությամբ: Նշված դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կայացնում է որոշում՝ նշելով այն հանգամանքները, որոնք կարող են պարզվել իրավիճակային հայտարարագիրը ներկայացնելով:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե հայտարարատուն սահմանված ժամկետում չի տրամադրում պարզաբանում կամ լրացուցիչ նյու-

Ուշադրություն դարձրեք հայտարարագրերի ուսումնասիրման ընթացքին:

թեր, կամ դրանք բավարար չեն առկա կասկածները փարատելու համար, ապա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն:

Ըստ Ձեզ՝ ո՞րն է լինելու սրա առավել ողջամիտ լուծումը: Հետագայում համեմատեք ներկայացվածի հետ:

Հաշվի առնելով քրեական գործ հարուցելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերի սահմանափակ շրջանակը՝ հարց է ծագում, թե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից փոխանցված նյութերի հիման վրա քրեական գործը թվարկված որ առիթով պետք է հարուցվի: Այս կարգավորման հետ կապված՝ նախ և առաջ քննարկման կարիք ունի այն հարցը, թե կոնկրետ իրավիճակում քրեական գործ հարուցելու որ առիթն է առկա: ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությո-

յունը թույլ է տալիս եզրահանգելու, որ այն նախատեսում է քրեական գործ հարուցելու առիթների սպառիչ շրջանակ, որոնցից և ոչ մեկը չի համապատասխանում ներկայացված կոնկրետ իրավիճակին: Կոնկրետ դեպքում թերևս քրեական գործ կարող է հարուցվել երրորդ առիթով, այն է՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս: Իհարկե, այս առիթը կարող է կիրառելի լինել քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ստուգելու քրեադատավարական գործիքակազմի կիրառման արդյունքում: Հակառակ պարագայում, քրեական գործ հարուցելու՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված առիթներից և ոչ մեկը կիրառելի չէ:

Այս խնդիրը թերևս կարգավորվել է ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, որում իբրև քրեական վարույթ նախաձեռնելու ինքնուրույն առիթ նախատեսվել է պետական կամ տեղական ինք-

նակատավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից՝ նրա գործունեության իրականացման կապակցությամբ ստացված առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը:

Քրեական գործ հարուցելու առիթների հետ կապված հաջորդ խնդիրը կապված է անանուն հաղորդումների հետ: ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ անանուն հաղորդումները քրեական գործ հարուցելու առիթ չեն: Սա նշանակում է, որ եթե կոռուպցիոն բնույթի հանցագործության մասին հաղորդումը ստացվել է անանուն, ապա քրեական գործ հարուցելու առիթ չունենք: Քանի որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունները բավականին վտանգավոր են, հետևաբար դրանց դեմ արդյունավետ պայքարի իրականացման համար՝ պետությունը պետք է հնարավորություն տա անանուն հաղորդումներն օգտագործելու: Պետք է նշել, որ շատ երկրներում կոռուպցիայի վերաբերյալ անանուն հաղորդումներն ընդունվում են որպես առիթ քրեական գործ հարուցելու համար (օրինակ՝ ԳՖՀ, Բելգիան, Շվեյցարիան): Իրականում, բոլոր այն հաղորդումները, որոնք տեղեկություններ են բովանդակում առերևույթ հանցագործության մասին, պետք է ընդունվեն իրավասու մարմինների կողմից: Անանուն հաղորդումը կարող է առիթ ծառայել ստուգելու համար այն փաստերը, որոնք տեղ են գտել այդ հաղորդման մեջ, իսկ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում՝ քրեական գործ հարուցելու համար: Ինչպես արձանագրել է ՀՀ վճռաբեկ դատարանը *Հրայր Մանուկյանի* գործով որոշման մեջ, հանցագործության մասին հաղորդումը, այդ թվում՝ ֆիզիկական անձի կողմից տրված, չի կարող լինել վերացական կամ ընդհանուր բնույթի: Որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի տվյալներ կոնկրետ հանցագործ

Մտաբերեք Ձեր պրակտիկայում անանուն հաղորդումների առնչությամբ ձևավորված պրակտիկան:

ծության մասին: Վերոգրյալը, սակայն, չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար (1):

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր հնարավորությունների սահմաններում և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի պետական հատվածից դուրս առանձին անհատների և խմբերի, ինչպես, օրինակ, քաղաքացիական հասարակության, ոչ կառավարական կազմակերպությունների և համայնքների հիմքի վրա գործող կազմակերպությունների, կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում ակտիվ մասնակցությունը նպաստելու համար և հասարակության կողմից կոռուպցիայի առկայության փաստի, դրա պատճառների և վտանգավորության բնույթի, ինչպես նաև դրա կողմից ստեղծվող սպառնալիքների գիտակցումը մեծացնելու համար: Այդ մասնակցությունը պետք է ամրապնդվի այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են.

- 1** թափանցիկության ուժեղացումը և որոշումների ընդունման գործընթացներում բնակչության ներգրավմանն աջակցելը,
- 2** բնակչության համար տեղեկատվության նկատմամբ արդյունավետ մուտքն ապահովելը,
- 3** հանրության տեղեկացվածության միջոցառումների իրականացումը, որոնք կնպաստեն կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը, ինչպես նաև պետական կրթության ծրագրեր իրականացնելը, ներառյալ ուսումնական ծրագրերը դպրոցներում և համալսարաններում,
- 4** կոռուպցիայի մասին տեղեկատվություն փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատությունը հարգելը, խրախուսելը և պաշտպանելը: Այդ ազատությունը կարող է ենթակա լինել սահմանափակումների, սակայն դրանք պետք է լինեն այնպես, ինչպես սահմանված է օրենքով, և որոնք անհրաժեշտ են.

5 այլ անձանց իրավունքները կամ համբավը հարգելու համար.

6 ազգային անվտանգության կամ հասարակական կարգի պահպանման կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

Յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու համար, որ Կոնվենցիայում հիշատակված հակակոռուպցիոն մարմինները հայտնի լինեն հանրությանը, և պետք է ապահովի մուտքը դեպի այդ մարմինները, այդ թվում՝ անանուն ձևով՝ ամեն մի դեպքի մասին նրանց հաղորդումներ տրամադրելու համար, որը կարող են դիտարկվել որպես իրավախախտում՝ սույն Կոնվենցիային համապատասխան:

Այս տեսանկյունից արդյունավետ պետք է համարել ազդարարման համակարգի ինստիտուտի կիրառությունը և «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով տրված լուծումները: Իհարկե, այս առնչությամբ քննարկման կարիք ունի նշված օրենքով նախատեսված կարգավորումների հարաբերակցությունը քրեադատավարական մեխանիզմների հետ: Նախ՝ նշված օրենքի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ ազդարարումն ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական հիմնարկներում և կազմակերպություններում, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց

Մինչև հաջորդ պարբերությանը ծանոթանալը, մտաբերեք ազդարարման համակարգն ու 1-10 բալանոց գնահատման սանդղակով, որտեղ 1-ն ամեցածր, իսկ 10-ն ամենաբարձր նիշն է, գնահատեք դրա արդյունավետությունը մեր երկրի համար՝ կոռուպցիայի դեմ ծավալած պայքարի շրջանակներում:

Չիմնավորեք Ձեր գնահատականը և նշեք, թե ինչ խնդիրներ եք տեսնում այդ համակարգի առնչությամբ:

սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդումն է օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմնին, իսկ ազդարարը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի կամ մարմնի հետ, որի հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ: Նշված օրենքի տրամաբանության իմաստով ազդարարումը փաստացի հաղորդում ներկայացնելու գործընթացն է կոնկրետ կարգավիճակ ունեցող սուբյեկտի՝ ազդարարի կողմից, սակայն ոչ թե հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմնին, այլ անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին (ներքին ազդարարում, 6-րդ հոդված) կամ իրավասու մարմնին (ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմին, պետական հիմնարկ և կազմակերպություն, հանրային նշանակության կազմակերպություն, որը սույն օրենքով սահմանված երաշխիքների ապահովմամբ պարտավոր է ընթացք տալ ազդարարմանը, արտաքին ազդարարում, 7-րդ հոդված): Ընդ որում, քննարկվող օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասն ուղղակիորեն սահմանում է, որ արտաքին ազդարարում չի համարվում քրեական հետապնդման մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը: Թե՛ ներքին, և թե՛ արտաքին ազդարարման պարագայում իրավասու սուբյեկտն իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունը ստուգե-

լիս՝ հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է ՀՀ դատախազություն (համապատասխանաբար 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ և 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): Այս դեպքում ևս քրեական գործ հարուցելու կոնկրետ առիթի հետ կապված՝ առկա է արդեն իսկ վերը քննարկված խնդիրը: Քրեադատավարական կարգավորումների հետ հարաբերակցության առումով որոշակիորեն հետաքրքրական են օրենքի 9-րդ հոդվածի կարգավորումները, որոնք վերաբերում են անանուն հաղորդումների ներկայացմանը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով: Այսպես, ազդարարն անանուն հաղորդումը ներկայացնում է այն միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրելու միջոցով: ՀՀ գլխավոր դատախազությունն իր իրավասության շրջանակներում ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը: Հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել: Քննարկվող հաղորդումն ստուգելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունն այն վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սահմանված կարգով հաղորդումները ստուգելու և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին այն ուղարկելու օրենսդրական կարգավորումը որոշակիորեն խնդրահարույց է գործող քրեադատավարական կարգավորումների համատեքստում: Այսպես, նշված կարգավորումնե-

Նախքան ստորև բերված տեղեկություններին ծանոթանալը, կարո՞ղ եք նշել, թե ինչ խնդիրներ են առկա այս հարցի առնչությամբ:

րի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ և նշանակվել փորձաքննություն: Այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստանալ նշանակված փորձաքննության եզրակացությունը և առանց այդ փորձաքննության եզրակացությունը ստանալու հնարավոր չէ լուծել հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու հարցը, ապա հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը հսկող դատախազի որոշմամբ կարող է երկարացվել ևս մինչև 20 օր ժամկետով: Երկարացված ժամկետի ընթացքում այլ դատավարական գործողություններ կատարվել չեն կարող, բացառությամբ այնպիսի գործողությունների, որոնք ուղղված են փորձագետի գրավոր միջնորդության բավարարմանը, առանց որոնց հնարավոր չէ փորձաքննություն կատարելը կամ պատշաճ փորձաքննություն իրականացնելը:

Այս օրենսդրական կարգավորման տառացի մեկնաբանությունից բխում է, որ քրեական հետապնդման մարմնին ներկայացված՝ հանցագործության մասին հաղորդումը կարող է ստուգվել բացառապես օրենքով նախատեսված քննչական և դատավարական գործողությունների միջոցով: Հետևաբար, հանցագործության մասին հաղորդումը ստանալուց հետո՝ բացի նշված գործողություններից այլ միջոցառումներ, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական, չեն կարող իրականացվել: «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ գործող քրեադատավարական կարգավորումների համակցությունից բխում է, որ օրենքի կարգավորումներն առերևույթ հակասության մեջ են մտնում քրեադատավարական օրենքի հետ՝ նախատեսելով տարբեր մեխանիզմներով ներկայացված հաղորդումների ստուգման տարբերակված ընթացակարգեր:

Այլ հարց է, որ սկզբունքորեն առավել ընդունելի է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում տեղ գտած կարգավորումը, քանի որ ինչպես ցույց է տալիս պրակտիկան, միայն քրեադատավարական օրենքով նախատեսված գործողությունների արդյունքում ձեռք բերվածը սովորաբար բավարար չէ, ուստի հաճախ քննիչը կամ դատախազը հետաքննության մարմնին հանձնարարություններ են տալիս կատարել օպերատիվ-հետախուզական գործողություններ: Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տեղեկությունների հիման վրա քրեական վարույթն իրականացնող մարմինները հնարավորություն են ստանում կազմել վարկածներ կամ կատարել համապատասխան քննչական և դատավարական գործողություններ: Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է ոչ միայն հանցագործության մասին տեղեկություններ ստանալու, այլև հանցագործությունների կանխման և խափանման համար: Դրանով պայմանավորված՝ օպերատիվ-հետախուզական գործողություններն իրականացվում են ոչ թե քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, այլ օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքով: Սակայն այնքանով, որքանով քրեադատավարական օրենքը չի նախատեսում նյութերի նախապատրաստման փուլում նշված միջոցառումների իրականացման հնարավորություն, խնդրահարույց է այս փուլում օպերատիվ-հետախուզական ճանապարհով ձեռք բերված տվյալները որպես ապացույց օգտագործելը: Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացվող տվյալների գործնական նշանակությունից ելնելով՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում ուղղակի

Գնահատեք օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող օրենսդրությունում առկա լուծումները քրեադատավարական օրենսդրության համատեքստում:

պետք է նախատեսել քննարկվող փուլում նշված գործողությունների կատարման օրենսդրական հնարավորություն: Այս առնչությամբ պետք է հիշատակել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, համաձայն որի՝ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել սույն օրենքով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների: Օրենսդրական այս կարգավորումից հետևում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացույցներ են: Չնայած ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի միջև եղած առկա հակասությանը, պետք է նշել, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում առկա կարգավորումն ավելի կիրառական է: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի օրենսդրությամբ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալներն օգտագործվում են հանցագործությունների բացահայտման համար: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը *Շենկյն ընդդեմ Շվեյցարիայի* գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Գաղտնի գործողությունների կատարման արդյունքում ձեռք բերված գրությունները որպես ապացույց օգտագործելն օրինական է, քանի որ այն թույլատրվում է շվեյցարական օրենսդրությամբ»:

Հանցագործությունների դեմ պայքարի գործընթացի բարդությունը պահանջում է այնպիսի միջոցների ձեռնարկում, որոնք հնարավորություն կտան դիմակայելու ենթադրյալ հանցանք կատարած անձանց կողմից կիրառվող նորարարություններին: Հանրային շահերի պաշտպանությունը ենթադրում է օրենսդրական համապատասխան փոփոխությունների կատարում՝ կապված օպերատիվ-հետախուզական տվյալների արդյունավետ օգտագործման հետ: Քրեադատավարական կարգավորումները պետք է նախատեսեն այն չափանիշները, որոնք ապահովում են օպերատիվ-հետախուզական տվյալների թույլատրելիությունը: Այդպիսի կարգավորման համար հիմք է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասում ներկայացված

այն պահանջը, համաձայն որի հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է: Սահմանադրությունից հետևում է, որ կապ չունի, թե իրավունքի որ ճյուղի շրջանակներում են ձեռք բերվել փաստական տվյալները: Քրեական դատավարությունում օպերատիվ-հետախուզական տվյալների օգտագործման համար պետք է հաշվի առնվեն մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ արդյոք չեն խախտվել մարդու հիմնարար իրավունքները, պահպանվել են արդյոք «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված խնդիրներն ու սկզբունքները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հիմքերն ու կարգը: Եթե օպերատիվ-հետախուզական տվյալները ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգի խախտմամբ, ապա դրանք քրեական դատավարությունում որևէ եղանակով չեն կարող որպես ապացույց օգտագործվել:

Հետևությունն այն է, որ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում պետք էր սահմանվել, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տեղեկությունները պետք է օժտված լինեն ապացույցների թույլատրելիության հատկանիշներով և օգտագործվեն քրեական դատավարությունում:

Ուշադրություն դարձրեք օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների ապացուցողական հատկանիշին:

Այս առումով քայլ առաջ պետք է համարել ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով գաղտնի քննչական գործողությունների նախատեսումը: Այսպես, ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ հետաքննությունը հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը (6-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետ): Ընդ որում, գաղտնի քննչական գործողությունները կրկնում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումները (241-րդ հոդված): Գաղտնի քննչական գործողությունը կատարվում է քննիչի հանձնարարությամբ՝ դատարանի որոշման հիման վրա (242-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ծանոթացեք այս կարևոր օրենսդրական նորամուծությանը և մտապահեք այն:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով նյութերի նախապատրաստման փուլը չի նախատեսվել, իսկ քրեական վարույթ նախաձեռնելուց անմիջապես հետո սկսվում է նախաքննությունը, որին զուգահեռ կարող է իրականացվել հետաքննություն՝ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի իմաստով՝ կարող ենք եզրահանգել, որ գործող կարգավորումների պարագայում առաջացող՝ վերը քննարկված խնդիրը լուծվել է:

Բացի այդ, ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածով հստակ դատավարական կարգավորում են ստացել գաղտնի քննչական գործողությունների իրականացման իրավաչափության երաշխիքները: Հիշատակման արժանի է նաև այն հանգամանքը, որ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքը կարգավորել է նաև վարույթից դուրս իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործման իրավաչափության հարցը: Այսպես, ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթի շրջանակներից դուրս իրականացված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում դատարանի թույլտվությամբ ստացված տեսագրությունները, տեսաձայնագրությունները, ձայնագրությունները և այլ օբյեկտիվ փաստաթղթերը կարող են ճանաչվել արտավարութային փաստաթուղթ և կցվել վարույթի նյութերին միայն այն դեպքում, երբ համապատասխան միջոցառումն իրականացվել է ենթադրյալ հանցագործությունը կանխելու, խափանելու կամ ենթադրյալ հանցանք կատարած անձին հանցանքի կատարման պահին

կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու նպատակով: Իհարկե, առկա է նշված կանոնից բացառություն, համաձայն որի՝ նշված փաստաթղթերը չեն կարող օգտագործվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքով մեղադրանքը հիմնավորելու համար: Այդ արտավարության փաստաթղթերը կարող են օգտագործվել միայն այն դեպքում, երբ դրանք ստացվել են քրեական վարույթ նախաձեռնելուց առավելագույնը չորս ամիս առաջ՝ ծանր հանցագործության մեղադրանքը հիմնավորելու համար, կամ ութ ամիս առաջ՝ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքը հիմնավորելու համար, իսկ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքներով՝ առանց ժամկետային սահմանափակման (խոսքն առավելապես վերաբերում է կիրերհանցագործություններին):

Ինչ վերաբերում է քրեական գործ հարուցելու հիմքերին, ապա դրանց օրենսդրական բնորոշման բացակայության պայմաններում, խնդիրը որոշակիորեն կարգավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներով: Այսպես, Վճռաբեկ դատարանի որդեգրած իրավական դիրքորոշումների համաձայն՝ քրեական գործ հարուցելու հիմքը հանցագործության հատկանիշների առկայության մասին վկայող տվյալներն են: Ընդ որում, քրեական գործ կարող է հարուցվել միայն հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալների բավարարության դեպքում: Դրանց բավարարության գնահատման կապակցությամբ հարկ է նշել, որ քրեական գործ հարուցելու համար անհրաժեշտ է ոչ թե հանցակազմի բոլոր տարրերի, այլ սուկ հանցագործության արտաքին հատկանիշների առկայության հավաստումը: Հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ենթադրությունն օրյեկտիվորեն կրում է հավանական բնույթ, քանի որ դրա վերջնական հաստատումը գործի քննության հետագա փուլերի խնդիրն է: Քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարությունը ենթադրում է հանցագործության հատկանիշների վերաբերյալ տվյալների այնպիսի համակցություն, որն օրյեկտիվ դիտորդին հնարավորություն կտա ենթադրություն կատարել հանցագործության հավանական առկայության վերաբերյալ: Հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածների դեպքում պետք է հարուցվի քրեական գործ (քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում) (2):

Այս առնչությամբ առկա օրենսդրական կարգավորումների հետ կապված թերևս հիմնական դատավարական խնդիրը նյութերի նախապատրաստման փուլում առկա գործիքակազմի ոչ բավարար լինելն է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների առերևույթ հատկանիշների առկայությունը պարզելու համար: Խնդիրն այն է, որ քննարկվող հանցագործությունների առանձնահատկություններով պայմանավորված՝ դրանց հատկանիշների առկայության բացահայտման լուրջ դատավարական գործիքներ կարող են լինել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացումը, հեռախոսային հաղորդակցության վերահսկումը և այլն, որոնք, սակայն, այս փուլում չեն կարող կատարվել: Խնդիրն առավել սրվում է այս փուլում օպերատիվ-հետախուզական գործունեություն ծավալելու վերը քննարկված խնդրահարույց իրավիճակի պայմաններում: Այս հարցերը, ըստ էության, լուծվել են ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով տրված՝ վերը նշված կարգավորումների համատեքստում:

ՀՂՈՒՄՆԵՐ



Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող կյուբերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար

- 1 ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Մանուկյանի գործով 2016թ.-ի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0154/11/14 որոշման 13-րդ կետը,
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=108927>
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)
- 2 ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Սիրվարդ Գևորգյանի վերաբերյալ գործով 2017թ.-ի օգոստոսի 30-ի թիվ ԼԴ/0018/11/16 որոշման 12-րդ կետը,
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=121857>
(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԱԶԴԱՐԱՐ — Ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի կամ մարմնի հետ, որի հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար:

ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ — Ազդարարի կողմից կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ իրավասու մարմին հաղորդման ներկայացումն է :

ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ — Ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ

կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդման ներկայացումն է:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԱՌԻԹ — Օրենքով սահմանված այն աղբյուրն է, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՔԵՐ — Հանցագործության մասին հաղորդման մեջ առկա կամ դրա ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներն են հանցագործության առերևույթ հատկանիշների վերաբերյալ: